ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2018 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության փոխգնդապետ Ազատ Բաբախանյանը (էլ. փոստ՝varchakanambion@inbox.ru):

Ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության գնդապետ Վլադիմիր Ավագիմյանը:

Ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության գնդապետ Վարուժան Գրիգորյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության կապիտան Աբգար Մարգարյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ոստիկանության պրակտիկայի և տեսության համատեղումը,կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2012-2018 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է 10-ից ավելի ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, 10-ից ավելի գիտական հոդվածներ, ամբիոնի դասախոսները մասնակցել են ոստիկանության կառավարման բնագավառին առնչող տարբեր գիտակագործնական կոնֆերանսների և քննարկումների: